

ՏԱՐԻՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ

(ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Արամ Գրիգորյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)



Գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Արամ Պարույրի Գրիգորյանի անունը ոսկե տառերով է գրված հայրենական գիտության և մշակույթի պատմության մեջ:

Ակադեմիկոս Արամ Գրիգորյանի 80-ամյա բեղմնավոր մտքի արդյունքն են նրա անհամար գիտական ու հրապարակախոսական հոդվածները, գրախոսականները և մենագրությունները, որոնցից յուրաքանչյուրը հետազոտական վառ մտքի և նրբաոճ գրչի զարմանալի համադրում է: «Կերպարի գեղարվեստական ոճը և կառուցվածքը», «Գրականություն և տեսություն», «Գրական ստեղծագործության կառուցվածքի վերլուծություն», «Ոճը և գրական զարգացումը», «Գրական ստեղծագործության ամբողջականությունը», «Գեղարվեստական ոճի հիմնահարցեր»․ ահա նրա գիտական հիմնարար աշխատությունների ամեննին էլ ոչ լրիվ ցանկը, որոնցից երեքը արժանացել են Հայկական ԽՍՀ Պետական մրցանակների: 1970 թ. սկսած՝ Ա. Գրիգորյանը ղեկավարում է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրականության տեսության բաժինը: 1979-1988 թթ. Արամ Գրիգորյանը Հայաստանի գրողների միության վարչության քարտուղարն էր, 1987 թ. պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով:

2003 թվականից Արամ Գրիգորյանը Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի Ռուսական բանասիրության ինստիտուտի գիտական ղեկավարն է, ինչպես և «ՌՀՀ բանբերի» խմբագրական-հրատարակչական խորհրդի անդամ: Սույն տարվա օգոստոսին ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդևը Հայաստան այցի ընթացքում ակադեմիկոս Արամ Գրիգորյանին հանձնեց Պուշկինի անվան մեդալ՝ ռուս-հայկական գրական, մշակութային և հոգևոր կապերի խորացման ասպարեզում ներդրած պատկառազորու վաստակի համար:

Կարելի է անվերջ գրել Ա. Գրիգորյանի մասին՝ նրա անձնական անհատում հմայքի, ժամանակի և տարածության մեջ նրա անփոփոխ մարդկային բարձր որակների, գիտնականի և հետազոտողի՝ նրա տաղանդի և, վերջապես, առանձնահատուկ շնորհի՝ միշտ մարդկային մնալու և սեփական էության դեմ բնավ չմեղանչելով ապրելու մասին:

Ա. Գրիգորյանը օժտված է մարդկանց հանդեպ հոգածության բացառիկ շնորհով, որ այնպես կարևոր է մեր անկանխատեսելի ժամանակներում: Իսկ դրան նպաստում են նրա բնածին նուրբ հումորը, տոհմիկ բարությունը և անվերջանալի մղումը, ինչպես հնում էին ասում, ի բարեբաստիկ գնացս շրջապատի՝ բարեկամների, գործընկերների և պարզապես լավ ծանոթների:

Նրա՝ հանրագիտարանային իմացությունը և հետազոտական նյութի ամենախորին ծալքերը թափանցելու անսպառ կարողությունը, մասնագի-

տական ճաշակը և իրեն հատուկ՝ շարադրանքի նրբագեղ ոճը յուրակերպ որակ են հաղորդում նրա գիտական աշխատություններին, որոնց մեջ հորձանք է տալիս մտքի կենարար ուժը: Արամ Գրիգորյանի գիտական հետազոտություններին բնորոշ են դիտարկվող հիմնահարցերի նուրբ վերլուծությունը և գեղարվեստական իրողությունների թարմաշունչ մեկնաբանություններն ու ընդհանրացումների ամբողջականությունը: Նրա որոնող հետազոտական միտքը շարունակում է իր ընթացքը տասնամյակների միջով, և ինչի մասին էլ որ գրի՝ լինի կինո, թատրոն, գրականություն, գրում է սրտանց, խորաթափանցությամբ և ազնվորեն: Արամ Գրիգորյանի աշխատությունները համակված են ոչ միայն գիտական, այլև ստեղծագործական ներշնչումներից սնվող մտքերով ու զգացումներով: Նրա զրբքերը վաղուց են գտել իրենց ճակատագիրը, քանզի դրանց մեջ հոգին է մի հեղինակի՝ բանականը, բարին, հավերժականը գնահատողի և այդ բարձրագույն արժեքների մունետիկի:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ. Գ.